ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«26» փետրվարի 2021թ. № 126

ՄԵՐՈՒԺԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԾԱԾԿԱՐԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 8-րդ կետով և 13-կետի «ա» և «բ» ենթակետերով, հաշվի առնելով, որ Մերուժան Վարազդատի Կարապետյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ «ք.Սպիտակ, Շիրակի խճուղի, թիվ 32» հասցեում գտնվող 06-006-0475-0010 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,08573 հեկտար մակերեսով հողամասի վրա 2016 թվականին ինքնակամ կառուցել է 168,98 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տուն և 3,83 քառակուսի մետր մակերեսով ծածկարան, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 1157996 վկայականը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի եզրակացությունը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Մերուժան Վարազդատի Կարապետյանի 2021 թվականի հունվարի 29-ի թիվ՝ Մ-42/28 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Մերուժան Վարազդատի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Շիրակի խճուղի, թիվ 32 հասցեում գտնվող

բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը՝ 0,08573 հեկտար մակերեսով:

2. Մերուժան Վարազդատի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող՝ «ք.Սպիտակ, Շիրակի խճուղի, թիվ 32» հասցեում գտնվող 06-006-0475-0010 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,08573 հեկտար մակերեսով հողամասի վրա կառուցված 168,98 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը և 3,83 քառակուսի մետր մակերեսով ծածկարանը ճանաչել օրինական:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Մերուժան Վարազդատի Կարապետյանի սեփականության իրավունքը:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5. Մերուժան Վարազդատի Կարապետյանին.

1) համայնքի բյուջե վճարել 184 469 ՀՀ դրամ օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 26
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«26» փետրվարի 2021թ. № 127

ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «բ» ենթակետով և 34-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 8-րդ կետով և 13-կետի «ա» ենթակետով, հաշվի առնելով, որ Սարգիս Վալոդյայի Թամամյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ «ք.Սպիտակ, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 171» հասցեում գտնվող 06-006-0520-0009 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,047 հեկտար մակերեսով հողամասի և «ք.Սպիտակ, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 70» հասցեում գտնվող 06-006-0520-0013 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,0043 հեկտար մակերեսով հողամասի վրա 2017 թվականին ինքնակամ կառուցել է 172,93 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տուն, որի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15012020-06-0007 և թիվ 15012020-06-0024 վկայականները, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի եզրակացությունը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված

անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Սարգիս Վալոդյայի Թամամյանի 2021 թվականի հունվարի 26-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Սարգիս Վալոդյայի Թամամյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Ս.Ավետիսյան փողոց, թիվ 171 հասցեում գտնվող 06-006-0520-0009 կադաստրային ծածկագրով 0,047 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը և Ս.Ավետիսյան փողոց, թիվ 70 հասցեում գտնվող 06-006-0520-0013 կադաստրային ծածկագրով 0,0043 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը՝ համաձայն հատակագծի:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով միավորված անշարժ գույքի ճշգրտված հատակագիծը՝ 0,055834 հեկտար մակերեսով և տրամադրել «քաղաք Սպիտակ, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 70,171» հասցեն:

3. Սարգիս Վալոդյայի Թամամյանին սեփականության իրավունքով պատկանող՝ «ք.Սպիտակ, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 70,171» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,055834 հեկտար մակերեսով հողամասի վրա կառուցված 172,93 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական:

4. Սույն որոշման 3-րդ կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սարգիս Վալոդյայի Թամամյանի սեփականության իրավունքը:

5. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

6. Սարգիս Վալոդյայի Թամամյանին.

1) համայնքի բյուջե վճարել 175 440 ՀՀ դրամ օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

7. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

8. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 26
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«26» փետրվարի 2021թ. № 128

ԱԼՎԱՐԴ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 81 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՋՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման ճշգրտված հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Ալվարդ Գևորգի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Ալեք Մանուկյան փողոց, թիվ 2 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը՝ 0,02488 հեկտար մակերեսով:

2. Սպիտակ համայնքի ղեկավարի 2021 թվականի փետրվարի 17-ի «Ալվարդ Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա գտնվող ինքնակամ կառուցված նկուղը, խանութը, բնակելի տունը և ձեղնահարկը օրինականացնելու մասին» թիվ 81 որոշման մեջ կատարել լրացում՝ նախաբանում գրված «դիմումը» բառից առաջ լրացնել «2021 թվականի հունվարի 27-ի թիվ Պ-32/28» թվերով և բառերով:

3. Սույն որոշման 2-րդ կետով կատարված լրացումը ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 26
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«26» փետրվարի 2021թ. № 129

ԱՍՏՂԻԿ ՄԱՀԻՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 25-րդ կետով և 32-կետի «ա» ենթակետով, հաշվի առնելով, որ Աստղիկ Գառնիկի Մահինյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ «ք.Սպիտակ, Ս.Ավետիսյան հրապարակ, թիվ 3 շենք, բնակարան 6» հասցեում գտնվող բնակարանին կից 2017 թվականին ինքնակամ՝ կառուցել է 9,9 քառակուսի մետր մակերեսով բնակարան և ինքնակամ բացել է մեկ դուռ, որի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2114801 վկայականը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ եզրակացությունը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Աստղիկ Գառնիկի Մահինյանի 2021 թվականի հունվարի 29-ի թիվ Մ-38/28 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Աստղիկ Գառնիկի Մահինյանին սեփականության իրավունքով պատկանող՝ «ք.Սպիտակ, Ս.Ավետիսյան հրապարակ, թիվ 3 շենք, բնակարան 6» հասցեում գտնվող

բնակարանին կից կառուցված է 9,9 քառակուսի մետր մակերեսով բնակարանը և բացված մեկ դուռը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Աստղիկ Գառնիկի Մահինյանի սեփականության իրավունքը:

3. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

4. Աստղիկ Գառնիկի Մահինյանին.

1) համայնքի բյուջե վճարել 3 951 ՀՀ դրամ օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. փետրվարի 26
ք.Սպիտակ